Ձև 1

# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

**2018 թվականի 1-ին եռամսյակում իրականացված միջոցառումների ֆինանսական ցուցանիշների վերաբերյալ (աճողական)**

**<<Խոսրովի անտառ>> պետական արգելոց>> ՊՈԱԿ**

**(հազար դրամ)**

| Ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումը | Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների NN | Պետության կողմից տրվող հատկացումների հաշվին ստացվող եկամուտների և իրականացվող ծախսերի | | | Պարզաբանումներ և բացատրություններ ծախսման նպատակի վերաբերյալ |
|---|---|---|---|---|---|
| | | Հաստատված նախահաշվի ցուցանիշները | Փաստացի կատարողականը | Գերածախս կամ թերիրացում (փակագծերում գերածախս, դրական նշանով թերիրացում) | |
| 1 | 2 | 3 | 4 | 5=3-4 | 6 |
| **Ա. ՄԻՋՈՑՆԵՐԻ՝ ԴԻՏԱՐԿՎՈՂ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾԻ ՍԿԶԲԻ ԱԶԱՏ ՄՆԱՑՈՐԴԸ** | | **0,0** | **0,0** | **0,0** | |
| **Բ. ԴԻՏԱՐԿՎՈՂ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ՍՏԱՑՎՈՂ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ ԸՆԴԱՄԵՆԸ (տող1+տող2+տող3) այդ թվում՝** | | **127406,1** | **22933,1** | **104473,0** | |
| **1. Դրամաշնորհներ ընդամենը, որից՝** | | **127406,1** | **22933,1** | **104473,0** | |
| 1.1. Արտաքին պաշտոնական դրամաշնորհներ | | | | 0,0 | |
| 1.2.Դրամաշնորհներ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից | | 127406,1 | 22933,1 | 104473,0 | Համաձայն դրամաշնորհի պայմանագրի մնացած մուտքերը կստացվեն մինչև տարվա վերջ |
| **2. Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից ստացվող սուբսիդիաներ** | | | | **0,0** | |
| **3. Այլ եկամուտներ, որից՝** | | **0,0** | **0,0** | **0,0** | |
| 3.1. Կազմակերպության հաշվեկշռում հաշվառվող գույքի (բացառությամբ հողի) վարձակալությունից | | | | 0,0 | |
| 3.2. Կազմակերպության տնօրինմանը հանձնված հողի վարձակալությունից | | | | 0,0 | |
| 3.3.Եկամուտներ ապրանքների մատակարարումից և/կամ ծառայությունների մատուցումից ընդամենը, այդ թվում՝ | | **0,0** | **0,0** | **0,0** | |
| · ծառայությունների մատուցումից | | | | 0,0 | |
| · ապրանքների մատակարարումից կամ իրացումից | | | | 0,0 | |
| · այլ եկամուտներ | | | | 0,0 | |

| 1 | 2 | 3 | 4 | 5=3-4 | 6 |
|---|---|---|---|---|---|
| **Գ. ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ (տողԱ+տողԲ)** | x | 127406,1 | 22933,1 | 104473,0 | |
| **Դ.ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ (տող1+տող2+տող3)՝ այդ թվում՝** | x | 44213,2 | 24411,9 | 19801,3 | |
| **Դ1.Կազմակերպության աշխատողների ԱՇԽԱՏԱՎԱՐՁԸ՝ ԸՆԴԱՄԵՆԸ, այդ թվում՝** | x | 22933,1 | 24411,9 | (1478,8) | |
| **Դ1.1 Աշխատանքի վարձատրություն** | x | **22933,1** | **24411,9** | **(1478,8)** | |
| -Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ | 4111 | 22933,1 | 24411,9 | (1478,8) | Հաշվարկված է նաև մարտ ամսվա աշխատավարձը, որի վճարումը կկատարվի մինչև ս/թ ապրիլի 15-ը |
| -Պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ | 4112 | | | 0,0 | |
| **Դ2. Ծառայությունների և ապրանքների ձեռքբերում** | x | **45,7** | **0,0** | **45,7** | |
| **Դ2.1. Շարունակական ծախսեր** | | **45,7** | **0,0** | **45,7** | |
| -գործառնական և բանկային ծառայությունների ծախսեր | 4211 | 45,7 | | 45,7 | |
| Էներգետիկ ծառայություններ | 4212 | | | 0,0 | |
| -Կոմունալ ծառայություններ | 4213 | | | 0,0 | |
| -Կապի ծառայություններ | 4214 | | | 0,0 | |
| -Ապահովագրական ծախսեր | 4215 | | | 0,0 | |
| -Գույքի և սարքավորումների վարձակալություն | 4216 | | | 0,0 | |
| -Այլ ծախսեր | 4217 | | | 0,0 | |
| **Դ2.2 Գործուղումների և շրջագայության ծախսեր** | x | **0,0** | **0,0** | **0,0** | |
| -Ներքին գործուղումներ | 4221 | | | 0,0 | |
| -Արտասահմանյան գործուղումների գծով ծախսեր | 4222 | | | 0,0 | |
| -Այլ (գործուղման հետ կապված) տրանսպորտային ծախսեր | 4229 | | | 0,0 | |
| **Դ2.3. Պայմանագրային ծառայությունների ձեռքբերում** | x | **0,0** | **0,0** | **0,0** | |
| -Վարչական ծառայություններ | 4231 | | | 0,0 | |
| -Համակարգչային ծառայություններ | 4232 | | | 0,0 | |
| -Աշխատակազմի մասնագիտական զարգացման ծառայություններ | 4233 | | | 0,0 | |
| -Տեղակատվական ծառայություններ | 4234 | | | 0,0 | |
| -Կառավարչական ծառայություններ | 4235 | | | 0,0 | |
| - Կենցաղային և հանրային սննդի ծառայություններ | 4236 | | | 0,0 | |
| -Ներկայացուցչական ծախսեր | 4237 | | | 0,0 | |
| -Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ | 4239 | | | 0,0 | |
| **Դ2.4. Այլ մասնագիտական ծառայությունների ձեռք բերում** | x | **0,0** | **0,0** | **0,0** | |
| -Մասնագիտական ծառայություններ | 4241 | | | | |
| **Դ2.5. Ընթացիկ նորոգում և պահպանում (ծառայություններ և նյութեր)** | x | **0,0** | **0,0** | **0,0** | |
| -Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում | 4251 | | | 0,0 | |

| 1 | 2 | 3 | 4 | 5=3-4 | 6 |
|---|---|---|---|---|---|
| -Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում | 4252 | | | 0,0 | |
| **Դ2.6. Նյութեր** | **x** | **0,0** | **0,0** | **0,0** | |
| -Գրասենյակային նյութեր և հագուստ | 4261 | | | 0,0 | |
| -Գյուղատնտեսական ապրանքներ | 4262 | | | 0,0 | |
| -Վերապատրաստման և ուսուցման նյութեր | 4263 | | | 0,0 | |
| -Տրանսպորտային նյութեր | 4264 | | | 0,0 | |
| -Շրջակա միջավայրի պաշտպանության և գիտական նյութեր | 4265 | | | 0,0 | |
| -Առողջապահական և լաբորատոր նյութեր | 4266 | | | 0,0 | |
| -Կենցաղային և հանրային սննդի նյութեր | 4267 | | | 0,0 | |
| -Հատուկ նպատակային այլ նյութեր | 4269 | | | 0,0 | |
| **Դ3. ԱՅԼ ԾԱԽՍԵՐ** | **x** | **21234,4** | **0,0** | **21234,4** | |
| **Դ3.1 Նվիրատվություններ ոչ կառավարչական (հասարակական) կազմակերպություններին** | **x** | | | **0,0** | |
| **Դ3.2 Բյուջեներ կատարվող վճարումներ** | **x** | **21234,4** | **0,0** | **21234,4** | |
| **Դ3.2.1.Հայաստանի Հանրապետության պետական բյուջե** այդ թվում | | 21234,4 | 0,0 | 21234,4 | |
| ***-Հարկեր ընդամենը, այդ թվում՝*** | 4822 | ***21234,4*** | ***0,0*** | ***21234,4*** | |
| ԱԱՀ | x | 21234,4 | | 21234,4 | |
| Շահութահարկ | x | | | 0,0 | |
| Նշել ըստ տեսակների | x | | | 0,0 | |
| Այլ հարկեր (նշել տեսակը) | x | | | 0,0 | |
| ***-Պարտադիր վճարներ, ընդամենը, այդ թվում՝*** | 4823 | ***0,0*** | ***0,0*** | ***0,0*** | |
| Նշել ըստ տեսակների | | | | 0,0 | |
| Նշել ըստ տեսակների | | | | 0,0 | |
| Նշել ըստ տեսակների | | | | 0,0 | |
| **Դ3.2.2.Համայնքների բյուջեներ** | | 0,0 | 0,0 | 0,0 | |
| ***-Հարկեր ընդամենը, այդ թվում՝*** | 4822 | ***0,0*** | ***0,0*** | ***0,0*** | |
| Գույքահարկ | x | | | 0,0 | |
| Նշել ըստ տեսակների | x | | | 0,0 | |
| Նշել ըստ տեսակների | x | | | 0,0 | |
| ***-Պարտադիր վճարներ, ընդամենը, այդ թվում՝*** | 4823 | ***0,0*** | ***0,0*** | ***0,0*** | |
| Տեղազննում | x | | | 0,0 | |
| Նշել ըստ տեսակների | x | | | 0,0 | |
| Նշել ըստ տեսակների | x | | | 0,0 | |
| **Դ3.3 Դատարանների կողմից նշանակված տույժեր և տուգանքներ** | **x** | **0,0** | **0,0** | **0,0** | |
| Դատարանների կողմից նշանակված տույժեր և տուգանքներ | 4831 | | | 0,0 | |
| **Դ3.4. ԱՅԼ ԾԱԽՍԵՐ** | **4861** | **0,0** | **0,0** | **0,0** | |
| Հակահրդեհային ճանապարհների վերանորոգում | x | | | 0,0 | |
| Ցուցանմուշների պահպանում | x | | | 0,0 | |
| Կենդանաբանի ծառայություն | x | | | 0,0 | |
| Նշել ըստ տեսակների | x | | | 0,0 | |
| Նշել ըստ տեսակների | x | | | 0,0 | |
| Նշել ըստ տեսակների | x | | | 0,0 | |
| Նշել ըստ տեսակների | x | | | 0,0 | |

| 1 | 2 | 3 | 4 | 5=3-4 | 6 |
|---|---|---|---|---|---|
| նշել ըստ տեսակների | x | | | 0,0 | |
| նշել ըստ տեսակների | x | | | 0,0 | |
| նշել ըստ տեսակների | x | | | 0,0 | |
| **Ե. ԸՆԴԱՄԵՆԸ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՎԵԼՈՒՐԴ (ՊԱԿԱՍՈՒՐԴ) ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ (տողԳ -տողԴ)** | | **83192,9** | **(1478,8)** | **84671,7** | |
| **Զ. ԶՈՒՏ ԴՐԱՄԱԿԱՆ ՀՈՍՔԵՐ ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐՈՒՄ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻՑ (տող Զ2 - տող Զ1)** | | **0,0** | **0,0** | **0,0** | |
| **Զ1.Կապիտալ ակտիվների ձեռքբերում այդ թվում՝** | x | **0,0** | **0,0** | **0,0** | |
| **Զ1.1.ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ** | x | **0,0** | **0,0** | **0,0** | |
| -Շենքերի և շինությունների ձեռք բերում | 5111 | | | 0,0 | |
| -Շենքերի և շինությունների կառուցում | 5112 | | | 0,0 | |
| -Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում | 5113 | | | 0,0 | |
| -Տրանսպորտային սարքավորումներ | 5121 | | | 0,0 | |
| -Վարչական սարքավորումներ | 5122 | | | 0,0 | |
| -Այլ մեքենաներ և սարքավորումներ | 5129 | | | 0,0 | |
| -Աճեցվող ակտիվներ | 5131 | | | 0,0 | |
| -Ոչ նյութական հիմնական միջոցներ | 5132 | | | 0,0 | |
| -Գեոդեզիական-քարտեզագրական ծախսեր | 5133 | | | 0,0 | |
| -Նախագծանախահաշվային աշխատանքներ | 5134 | | | 0,0 | |
| **Զ1.2. ՈՉ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ** | x | **0,0** | **0,0** | **0,0** | |
| -Հող | 5411 | | | 0,0 | |
| -Ընդերքային ակտիվներ | 5421 | | | 0,0 | |
| -Այլ բնական ծագում ունեցող ակտիվներ | 5431 | | | 0,0 | |
| -Ոչ նյութական ոչ արտադրական ակտիվներ | 5441 | | | 0,0 | |
| **Զ2.Կապիտալ ակտիվների վաճառքից մուտքեր** | x | | | **0,0** | |
| **Է. ԸՆԴԱՄԵՆԸ ԴՐԱՄԱԿԱՆ ՀԱՎԵԼՈՒՐԴ (ՊԱԿԱՍՈՒՐԴ) (տող Ե + տող Զ)** | x | **83192,9** | **(1478,8)** | **84671,7** | |

Տնօրեն ____________ [illegible]
(ստորագրություն)

Գլխավոր հաշվապահ ____________ Բակուր Շահնազարյան
(ստորագրություն)

Հաշվետվություն
«Խոսրովի անտառ» պետական արգելոց» ՊՈԱԿ-ի 2018 թվականի 1-ին եռամսյակում իրականացված միջոցառումների

«Խոսրովի անտառ» պետական արգելոցի պահպանության, գիտական ուսումնասիրությունների կատարման ծառայություններ» ծրագրի <<Բնական էկոհամակարգերի լանշաֆտային և կենսաբանական բազմազանության, բնության ժառանգության պահպանություն>> բաժնի նախատեսվող միջոցառումներն ապահովման համար իրականացվել է.

- Ա) «Խոսրովի անտառ» պետ. արգելոց» ՊՈԱԿ պահպանության բաժնի աշխատանքներն իրականացվում են համաձայն 2018թ. աշխատանքային ծրագրի և միջոցառումների պլանի:

Պետ. արգելոցի և պետ. արգելավայրերի ամենօրյա միջոցառումները պատշաճ իրականացնելու համար պետ. արգելոցում և պետ. արգելավայրերում իրականացվում են շուրջօրյա հերթապահություններ և շրջագայություններ: Ստուգումների արդյունքում չի հայտնաբերվել և չի արձանագրվել արգելոցային ռեժիմի խախտման դեպքեր:

Հարակից համայնքների հետ համագործակցելով ապահովվել է պետ. արգելոցի և պետ. արգելավայրերի կենսաբազմազանությունն ու բնականոն զարգացումը:

**Տեղեկանք**

հակահրդեհային ծրագրի մասին

ԱԻՆ և «Խոսրովի անտառ» պետական արգելոցի հետ համատեղ մշակվում են հակահրդեհային միջոցառումների ծրագիր /կից ներկայացնում եմ 2017 թ. հաստատված ծրագիրը/:

բ) հարող բնակավայրերի բնակչության շրջանակներում էկոլոգիական իրազեկություն, էկոդաստիրակություն.

2-րդ եռամսյակում հարակից համայնքների բնակիչների հետ էկոդաստիարակչական աշխատանքների շրջանակներում կտարվեն բացատրական և քարոզչական աշխատանքներ:

գ/ Պահաբաժիններում գարնանային և աշնանային հերթական և վերստուգիչ ստուգումների իրականացում

Պետական արգելոցում և պետական արգելավայրերում գարնանային հերթական և վերստուգիչ ստուգումները կկատարվեն 2-րդ եռամսյակում, իսկ աշնանային ստուգումները 4-րդ եռամսյակում:

**Տեղեկանք**

**Էկոտուրիզմի զարգացմանն ուղղված միջոցառումների**

2.1. «Գառնի» և «Խոսրով» այցելուների կենտրոններում ստեղծվել են զբոսաշրջության համար անհրաժեշտ բոլոր պայմանները՝ բուկլետներ, բրոշուրներ, տեսաերիզներ, տեղեկատվական նյութեր, նկարներ, որոնց միջոցով այցելուն կարող է ծանոթանալ առանձին երթուղիներում հանդիպող բուսական ու կենդանական աշխարհի տեսակներին, ինչպես նաև պատմամշակութային հուշարձան-կոթողներին:

2.2 Արգելոցում զբոսաշրջության սպասարկման համար ներգնա զբոսաշրջությամբ զբաղվող կազմակերպությունների հետ տարվում են բանակցություններ՝ Նուեավիստա, Ուան վեյ, Այաս տուր և այլն:

2.3. «Խոսրովի անտառ» պետական արգելոց» ՊՈԱԿ և ԿԲՀ հետ համատեղ մշակվել է էկոտուրիստական երթուղիների 2018 թ. գնացուցակը և ներկայացվել կառավարման խորհրդի քննարկմանն ու հաստատմանը:

2.4. Տուրիստական երթուղիներում կատարվել է արահետների մաքրում՝ Խոսրով և Խաչաձոր տեղամասերում 20 կմ: Էկոերթուղիները մաքրվել են քարաթափումներից, կուտակված աղբից:

**Տեղեկանք**

**Գիտական միջոցառումների**

ա) Խոշոր կաթնասուն կենդանիների հաշվառում

Կենդանիների պոպուլացիային և միգրացիոն ուղիներին հետևելու համար Վայրի բնության հիմնադրամի /WWF/ հետ համատեղ շարունակվում է տեսա և ֆոտոթռնիչների օգնությամբ կատարել կենդանական աշխարհի սեզոնային միգրացիայի և հաշվառման աշխատանքներ: Խոշոր կաթնասուն կենդանիների հաշվառման նպատակով «Խոսրովի անտառ» պետական արգելոցի աշխատակիցների կողմից 6 հատ ֆոտոթռնիչներ են տեղադրվել նաև Խոսրով և

Խաչաձոր տեղամասերում, իսկ WWF-ի հետ համատեղ Գառնի և Կաքավաբերդ տեղամասերում 12 հատ: Հաշվառվել են մոտավոր

1. բեզոարյան այծ - 107 հատ,
2. նապաստակ - 31 հատ,
3. Գորշ արջեր - 7 հատ,
4. լուսան - 7 հատ,
5. աղվես - 11 հատ,
6. գայլեր - 17 հատ,
7. քարակզաքիս - 7 հատ:







բ) Որոշ տեսակների գիշատիչ թռչունների թվաքանակի և տեսակային կազմի որոշում

- Գիտական բաժնի կողմից շարունակվում են որոշ տեսակի ողնաշարավոր կենդանիների և գիշատիչ թռչունների (սև անգղ, սպիտակագլուխ անգղ, գիշանգղ, մորուքավոր անգղ, քարարծիվ) կենսաէկոլոգիական առանձնահատկությունների ուսումնասիրման և հաշվառման աշխատանքները:

«Խոսրովի անտառ» պետական արգելոցը Հայաստանում միակ տարածքն է, որտեղ բնադրում է սև անգղը: Այս հազվագյուտ տեսակը բնադրում է գիհու ծառերի կատարին, առավելապես Խոսրով տեղամասում: Գիտական բաժնի կողմից կատարված դիտարկումների ընթացքում արգելոցի տարածքում հայտնաբերվել է 7 գործող բույն: Հաշվառվել է 8 հատ սև անգղ:



Գառնանգղը բնադրում է բարձր լեռներում զառիվայրերի և թեք ժայռերի վրա: Արգելոցի տարածքում հայտնաբերվել է 2 բույն: Բները գտնվում են «Խոսրով» տեղամասում, Տափի բերդի շրջակայքում: Դիտարկումները սկսվել են վաղ գարնանից: Հաշվառվել է 2 հատ գառնագղ:



գ)Սողունների որոշ տեսակների տարածվածության և դրանց քարտեզագրման աշխատանքների իրականացում

Աշխատանքները կիրականացվեն 2-րդ և 3-րդ եռամսյակներում:

դ) Վեդի և Ազատ գետերի որոշ ձկնատեսակների ուսումնասիրում /կարմրախայտ, քուռի բեղլու/

Աշխատանքները կիրականացվեն 2-րդ և 3-րդ եռամսյակներում:

ե)Հավաքված բուսատեսակների (հերբարիումների) գույքագրում, տեսակային կազմի որոշում և քարտադարանի ստեղծում

Բուսաբանական բաժնում շարունակվում են հավաքված հերբարիումների գույքագրման աշխատանքները, որի ընթացում հաշվառվել է 99 ընտանիք իր 538 ցեղով և 1600 տեսակով; Հաշվետու եռամսյակում կատարվել է որոշված և ինսերացված (ախտահանված) հերբարիումների կարում 42x28 սմ չափի ստվարաթղթի վրա: Ամբողջովին կարվել է Հովվափողազգիներ (Alismataceae), Խաչածաղկավորներ (Brassicaceae), Զանգակազգիներ (Campanulaceae), Թխկի (Aceracea), Ծնեփակազգիներ (Asparagaceae), Մեխակազգիներ (Caryophyllaceae), Կապարազգիներ (Capparaceae), Ցախակեռասազգիներ (Caprifoliaceae), Թելուկազգիներ (Chenopodiaceae), Նոճազգիներ (Cupresaceae), Թիթեռնածաղկավորներ (Fabaceae, Papilionaceae), Ծխաբույսազգիներ (Fumariaceae), Բոզազգիներ (Gentianaceae), Հակինթազգիներ (Hyacinthaceae), Շուշանազգիներ (Liliaceae), Կտավատազգիներ (Linaceae), Աղտորազգիներ (Anacardiaceae), Վարդազգիներ (Rosaceae), Շնմեռուկազգիներ (Apocinaceae), Նվիկազգիներ (Araceae), Թունաթափազգիներ (Asclepidaceae), ընտանիքներին պատկանող հերբարիումները:

զ) Պետական արգելոցի թանգարանի և գիտական լաբորատորյայի աշխատանքների կազմակերպում և իրականացում

Թանգարանում ավարտվել են էտալոնային ցուցանմուշների գիտական անձնագրերի պատրաստման աշխատանքները:

Ցուցանմուշների ախտահանման աշխատանքները կկատարվեն 2-րդ եռամսյակում: